Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԻՐ ԲԱԼԴԻ ԾԱՌԱՆ

891.71ս
Պ-907

«ԲՈԼՇԵՎԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՌՈՍՏՈՎ.-ԴՈՆ.--1938

891.71Մ
Պ-90
2011-05
Проверено
1949 г.

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԻՐ ԲԱԼԴԻ ԾԱՌԱՆ

01127371-6

НАУЧНАЯ БИБЛИОТЕКА ТАТРЕСПУБЛИКИ TATARSTAN ĞILMI KITEPXANƏSE

Թարգմանություն Աթ. Խնկոյանի

ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ «ԲՈԼՇԵՎԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ—1938

23 JUL 2013

4902

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽ - ССР
им. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

28760 60

Ответ. по выпуску *П. Чатыньян*
Техн. редактор *Л. Жданович* Корректор *М. Кеворкьян.*
Обложка худ. *Н. Филова*

Издание № 8/34. Сдано в набор 17 января 1938 г., подписано в печать 22 марта 1938 г. Формат 82x108/32. Об'ем 3/4 п. л. Тираж 5150

Уполоблит № И-759. Типография Ростовского обл. армянского издательства „Большевик" (Ростов-Дон, Ворошиловский 27). Заказ № 139

Մի ժլատ տերտեր—
Հարուստ, անատեր—
Վաղ գնաց շուկա,
Վոր գործը հոգա,
Հետ դառնա տուն գա։
Եզ տեր ժլատին
Պատահեց Բալդին,
Ասավ, «որհնիր, տէր,
Ի՞նչ կուզես, տերտեր»։
— Կուզեմ մի ծառա,
Շատ բան իմանա,
Ապրի չոր հացով,
Լինի խոհարար,
Ձիապան, դուրգար,
Շատ եժան վարձով։
— «Ա՛ տեր, ինձ վարձիր,
Կուզես քար բարձիր,
Մի կլոր տարի
Ինձ տանըդ պահի.
Թե ուտիս, թե պաս,
Տուր ինձ լոկ սպաս.
Ու տարվա վերջին
Քո տանը միջին
Թող մինջամատով

Ցերեք հատ կըտոց
Տամ քո ճակատով,
Ահա իմ վարձը—
Վերջացավ հարցը»։
Տերտերը խորհեց,
Ճակատը քորեց.
Կըտոցները իրա մեջ
Բան չհաշվեց, ասավ՝ հեչ,
Կըտոց էլ կա, կըտոց էլ
Ցեվ մոռացվեն գուցե էլ։
Համաձայնեց պայմանին
Ցեվ տուն բերից ծառային։

* * *

Ինչպես ցույց տվավ փորձը,
Բալդին գիտեր իր գործը.
Արի յեր մարդը,
Վարում եր արտը,
Պահում եր նա ձին,
Հանում եր հնձին.
Նա քիչ եր քնում,
Շուտ եր վեր կենում,
Շուկա յեր գնում,
Տան պաշար առնում,
Տանը ջուր կրում,
Ոչխար վառում,
Վրան ձու խաշում,
Խաշում ու կպճում,
Ցերբեք չեր վիճում։
Հիացել եր իրիցկինը.
Վրան ցավում եր աղջիկը.
«Հայրիկ» կանչում տան փոքրիկը,
Վոր նստում եր Բալդու գիրկը։
Տերտերը միայն
Չեր սիրում նրան.
Ցերը հիշում եր Բալդու մատը,
Ճըքճըքում եր ծեր ճակատը։

* * *

Տարին անցնում է որեոր,
Իսկ տերտերը մտամոլոր
Վոչ ուտում է, վոչ էլ խմում,
Տարվա վերջին է սպասում։
Ահա մի որ
Խեղճ ու մոլոր
Են քահանան
Իրիցկինկան
Խոստովանեց
Ամեն մի բան.
Իրիցկինը՝—«Ցես թուլ չեմ տա,
Ա՛ տեր, Բալդին ճակատիդ տա,
Ցեկ դիր նրան այնպես գործի,
Վոր նա իրա ուժը փորձի,
Են գործն անել չկարենա
Ու ամոթով դատարկ գնա»։
Ուրախացավ են տերտերը.—
Իսկույն և եթ—հենց նույն որը
Ասավ. «Բալդի, սատանեքը
Դեռ չեն տվել տնորհնեքը,
Գնա ուզիր ապառիկս,
Ցերեք տարեն առնելիքս»։

* * *

Բալդին մի հեզ
Ծառայի պես
Կեսը կամա,
Կեսն ակամա,
Ցելավ գնաց ծովի քովը,
Թոկն ոլորեց, կախեց ծովը,
Խիստ փոթորիկ ծովում հանեց,
Ափը ափին տվեց խառնեց.
Մի քիչ հետո հանկարծ—ահա՞
Ծովից յելավ մի սատանա.
—Ի՞նչ ես ուզում, Բալդի, մեզնից,
Թոկը քաշիր, հանիր ծովից։

—Զե՛, ձեր ծովը յես կըխառնեմ
Ու բոլորիդ դուրս կըհանեմ,
Ձեր վրայի ապառիկը,
Իմ տերտերի առնելիքը
Եսպես յերկար յերեք տարի
Ինչո՞ւ համար դուք չեք բերի։
—Հերիք խառնես ծովը, Բալդի,
Ձեռքիդ թոկը խնդրեմ վայր դի,
Շուտով կըտանք մենք քո հարկը,
Ես ա կըդա իմ թոռնիկը։—
Գնաց պապը, յեկավ թոռը,
Ցեկավ, տվավ գլխին զոռը.
Մլավելով ինչպես կատուն,
—Բարև քեզի, ասավ Բալդուն.
Ես ի՞նչ կարդ ե,
Ես ի՞նչ վարք ե,
Քո ուզածը
Ես ի՞նչ հարկ ե

Ես ի՞նչ լուր ե,
Մեզ չարերիս
Ինչ տխո՞ւր ե,
Հեչ լսած կա՞ գոնե մեկը—
Հարկ վճարեն սատանեքը.
Ե՛, ինչ՞ անենք, կուզես կըտանք,
Բայց մի պայման չըմոռանանք.
Մինչև ծովի պապըս հարկը,
Բերի, լցնի կաշե պարկը,
Արի վազենք մենք միասին
Ծովի շուրջը. ճամբի կիսին
Ով վոր հոգնի ու հետ ընկնի,
Թող նա վոսկու պարկը տանի։
Մի հռհռաց եդաեղ Բալդին
Ծաղրի տալով չարի ճուտին.
«Դու ո՞վ ես վոր, ա՛յ անհեթեթ,
Բալդին վազի քեզպեսի հետ.
Քիչ սպասի թող լըղպորը,
Գնամ բերեմ իմ յեղբորը»։
Բալդին անտառ գնաց արագ,
Բռնեց յերկու հատ նապաստակ
Ցեվ գցելով նրանց պարկը,
Դարձավ յեկավ ծովի ափը.
Հանեց մեկին պարկի միջից
Ու բռնելով ջուխտ ականջից
Ասավ չարին. «Վախկոտ ճուտիկ,
Խոսքիդ տերն ես, արի մոտիկ,
Առաջ վազիր դեռ յեղբորս հետ.
Ի՞նչ ես նայում վրան խեթ-խեթ.
Դեհ մեկ, յերկուս, յերեք՝ վազե՛ք,
Դուք իրարի լավ կըսազեք»։
Ու վազեցին. նապաստակը
Փախավ անտառ, մտավ ծակը.
Իսկ սատանեն՝ տնկած դունչը՝
Շրջան տալով ծովի շուրջը
Քրանաթաթախ և վազեվազ

Շունչը կտրած և հազիվ հապ,
Քարին տալով իր մի վոտը՝
Իրան գցեց Բալդու մոտը.
Ցեվ ինչ տեսավ են լդպորը—
Բալդին շոյում է յեղբորը.
«Ապրի, ապրի իմ մոր բալեն,
Խիստ հոգնել է դիլ վազելեն»։
Սատանեն եր՝ փոքրիկ ճուտը,
Փորին տալով յերկար տուտը,
Ասավ.—Գնամ բերեմ հարկը,
Վոր լցրել է պապս պարկը։
Գնաց Թոռը, պատմեց պապին,
Թե հաղթվեց ծովի ափին։

* * *

Բալդին նորից
Թոկն ոլորեց,
Կախեց ծովից.
Խիստ փոթորկից

Ջայներ յեկան
Ծովի տակից։
Մի այլ հնարք գտավ պապը
Ցեվ ուղարկեց Թոռին ափը.
Թոռը յեկավ, ասավ Բալդուն.
— Հերիք խառնես մեր ծովը դուն,
Ես ինչ կարգ է,
Ես ինչ վարք է,
Քո ուզածը
Ես ինչ հարկ է.
Ես ինչ լուր է
Ինչ տխուր է,
Իմացած կա գոնե մեկը—
Հարկ վճարեն սատանեքը.
Է՛, վոր կուզես, մենք ել կըտանք,
Բայց մի պայման չըմոռանանք։
Մեզնից հեռու, գետնի վրա,
Վորտեղ կուզես, նշան արա.
Ջեռքիս փայտը ով մեզանից
Դեն շպրտի են նշանից,
Թող նա տանի վոսկու պարկը—
Ցերեք տարեն ժողված հարկը։
Հը՛, լավեցար,
Տես վախեցար
Թեվդ Ջարդի
Վախկոտ Բալդի։—
«Հա՛, վախեցա Թեվս Ջարդի,
Հլա լեզվին ես լակոտի,
Հլա մտիկ պուճուր շանը։
Ա՛յ, են ամպն է իմ նշանը։
Փայտդ ենտեղ յես կնետեմ,
Այնուհետև յես ձեզ գիտեմ»...
Սատանեն եր՝ փոքրիկ ճուտը,
Փորին տալով յերկար տուտը,
Լեղապատառ ընկավ ծովը,
Շունչը առավ պապի քովը,

Ցեվ յեղածը ծովի ափին
Նա կցկտուր պատմեց պապին։

* * *

Բալդին նորից
Թոկն ոլորեց
Կախեց ծովից,
Խիստ փոթորկից
Ձայներ յեկան
Խոր հատակից։
Դարձյալ յեկավ են լղպորը։
—Ա՜յ անիծվի ես մեր որը,
Բալդի, ունեմ և մի նոր բան...
«Ս

, կաթնակեր, չքոտ, անբան,
Հերթն իմն է,—ասավ Բալդին
Են աներես չարի ճուտին.—
Տեսնում ես դու՝ են մատակ ձին
Արածում է ջոկ, առանձին։
Ցերթե նրան բարձրացընես,
Ձեռքերովդ կես վերստ տանես,
Ձեզ կբաշխեմ եդ ձեր հարկը,
Դատարկ կերթամ մեր աշխարհքը»։
Սատանան եր՝ եդ խոսքի հետ
Հասավ ձիուն, իսկույն ևեթ
Առավ նրան իր ձեռներին,
Ջոռը տալով ջուխտ ծնկներին։
Բայց յերկու քայլ դեռ չըփոխած,
Փռվեց գետնին, սաստիկ դողաց։
«Ժուլիկ, մուլիկ չար սատանա։
Վրադ հոգոց ով կըկարդա,
Վեր կաց, վեր կաց, չարի ճուտիկ,
Աչքերդ բաց ու ինձ մտիկ,
Դու չըտարար ձին ձեռներով,
Ցես կըտանեմ ես վոտներով»։
Ասավ Բալդին ու ձին հեծավ,
Վոտների մեջ նրան առավ,
Մի վերստ տեղը իսկույն անցավ։



Փոշին յելավ, դուման դառավ։
Եդտեղ դարձյալ չարի ճուտը
Ձնասկանալով Բալդու սուտը,
Լեղապատառ ընկավ ծովը,
Շունչը առավ պապի քովը,
Իր տեսածը ծովի ափին
Նա կըցկտուր պատմեց պապին։

* * *

Բալդին նորից
Թոկն ոլորեց,
Կախեց ծովից,
Խիստ փոթորկից
Ձայներ յեկան
Խոր հատակից։
Հնարք չըկար. սատանեքը
Հավաքեցին իրանց հարկը,
Շալկած բերին Բալդու մոտը։
Մեղա գալով՝ ընկան վոտը։
— Առ ուզածդ, գնա, ասին,
Միայն հանգիստ տուր մեր դասին։

* * *

Բալդին յեկավ տնքտնքալով,
Վոսկին մեջքին զնգզնգալով։

Վայ իմ որին՝ տերտերն ասավ,—
Թռավ տեղից, տեղ չգտավ,
Կնկա փեշի տակը մտավ,
Բալդին նրան փեշի տակից
Քաշեց հանեց՝ բռնած միրքից.
Ասավ. «Բերի յես քո գանձը.
Տարվա վերջն է, տուր իմ վարձը»։
Են տեր ժլատը
Բռնեց ճակատը.
Բալդին մի հետ կրտտացրեց,
Նրան ոճորքը թրոցրեց.
Մի անգամ էլ կրտտացրեց,
Լեզուն բերնում լռեցրեց.
Վերջն էլ վոր չրկտտացրեց,
Խեղճ տերտերին գրժվացրեց.
—Ժլատ ծերուկ, ես քեզ մի դաս,
Եժանության էլ ման չրգա.
Ասավ Բալդին ուրախ-ուրախ,
Յելավ գնաց անվարձ-անհախ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅ. Մ.ՍՍՀ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0395326

4902

ԳԻՆԸ 20 կոպ.
Цена 20 коп.

А. С. ПУШКИН

СКАЗКА О ПОПЕ И ЕГО РАБОТНИКЕ БАЛДЕ

(На армянском языке)

РОСТОВСКОЕ ОБЛАСТНОЕ
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО
„БОЛЬШЕВИК"
Ростов-Д., Ворошиловский пр., 27